



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ

Գ Յ ՈՒ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք

<<04>> սեպտեմբերի 2015 թվական

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 7

Գ Յ ՈՒ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն ՈՒ Հ Ե Ր Թ Ա Կ Ա Ն Ն Ի Ս Տ Ի

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ Գյումրի համայնքի ղեկավար Ս.Մ.Բալասանյանը

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝ Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Ռ.Ասատրյանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Ադամյան Գ. Ադամյան Ա. Բադեյան Ա. Բադրամյան Մ. Գաբոյան Ա.Գրիգորյան Վ.Եղիգարյան Հ. Խաչատրյան Տ.Հովհաննիսյան Վ. Հունանյան Ռ.Մխիթարյան Վ.Շիրինյան Մ. Սահակյան Տ. Փանոսյան

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝ Համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Ա.Բալաբեկյանը, Վ.Մուքիսայանը, Ա.Մովսիսյանը, Հ.Սարգսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանը, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կ.Մանասյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ Ա.Հակոբյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանը, կրթության բաժնի պետ Հ.Սուլթանյանը, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանը, համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետ Ա.Դավթյանը, վերահսկողության բաժնի պետ Ա.Համբարձումյանը, իրավաբանական ապահովման բաժնի պետ Ա.Գրիգորյանը, ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի պետ Ա. Հովհաննիսյանը, ներքին աուղիտի բաժնի պետ Կ. Խաչատրյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝

ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է)

ԼՍԵՑԻՆ.

- **ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 04-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍԻՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 04-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Զիլավյանին: Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 205-Ն որոշմամբ հաստատված Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) համայնքի բյուջեի Ֆոնդային մասի մուտքերը հողի օտարումից ավելացնել 48.000.000 (քառասունութ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամով, համապատասխանաբար ավելացնել բյուջեի ֆոնդային մասի ելքերը և այն՝ 7.000.000 (յոթ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը, ուղղել 1/1/1 գործառական դասակարգման (5113) <<Շենք-շինությունների կապիտալ նորոգում>> տնտեսագիտական դասակարգման հոդվածին, 10.000.000 (տաս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը՝ 1/1/1 գործառական

դասակարգման (5111) <<Շենք-շինությունների ձեռքբերում>> տնտեսագիտական դասակարգման հոդվածին, 30.000.000 (երեսուն միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը՝ 4/5/1 գործառական դասակարգման (5113) <<Շենք-շինությունների կապիտալ նորոգում>> տնտեսագիտական դասակարգման հոդվածին և 1.000.000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը՝ 6/6/1 գործառական դասակարգման (5129) <<Այլ մեքենաներ, սարքավորումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածին,

2) համայնքի բյուջեի վարչական մասի 1/1/1 գործառական դասակարգման (4111) <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածը նվազեցնել 14.000.000 (տասնչորս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամով, բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը ավելացնել 14.000.000 (տասնչորս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամով և այն ուղղել ֆոնդային մաս՝ 1/1/1 գործառական դասակարգման (5111) <<Շենք-շինությունների ձեռքբերում>> տնտեսագիտական դասակարգման հոդվածին,

3) 1-ին, 2-րդ և 3-րդ հատվածները՝ շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար NN 1-ին , 2-րդ, 3- րդ հավելվածների:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ» ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Գյումրի համայնքի «Գյումրու օր» ամենամյա տոնակատարության և Հայաստանի Հանրապետության անկախության օրվան նվիրված միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով հատկացնել 9 000 000 (ինը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
- Թույլատրել անհրաժեշտ գնումները իրականացնել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
- Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/6/1 գործառնական դասակարգման (4861) «Սյլ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ, ԿԱՌԼԵՆ ՄԱՆՁԼԻԿՅԱՆԻ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել դրամական օգնություն հրդեհից այրված ժամանակավոր տնակներում բնակվող անօթևան մնացած, սոցիալապես ծանր պայմաններում հայտնված ներքոգրյալ ընտանիքներին՝

1) Շուշանիկ Սահակյանի ընտանիքին՝ 300.000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,

2) Կառլեն Մանջլիկյանի ընտանիքին՝ 100.000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի

Հանրապետության դրամ,

3) Սամվել Ղազարյանի ընտանիքին՝ 100.000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՄԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի N 7-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՄԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2015 թվականի փետրվարի 06-ի <<Գյումրիում 2015 թվականի հունվարի 12-ին կատարված ողբերգության հետևանքով Ավետիսյանների ընտանիքի մահացած անդամների հուղարկավորության, հետագա արարողությունների կազմակերպման, գերեզմանի շինարարական աշխատանքների կատարման նպատակով ֆինանսական միջոցներ տրամադրելու մասին>> N 7-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը

1) որոշման 1-ին կետի <<11 000 000 (տասնմեկ միլիոն)>> թիվը և բառերը փոխարինել <<11 915 000 (տասնմեկ միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար)>> թվով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՄԵՑԻՆ.

6. ՍՈՑԻԱԼԱԳԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 163 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԵՐԵՔ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՄԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 163 (մեկ հարյուր վաթսուներեք) անձանց կանխիկ տրամադրել 1 700.000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՄԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԳԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐԱՄԱՂԻՎՈՂ ՎԱՌԵԼԱՓՈՅՏԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏՎԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող վառելափայտի գնման համար հատկացնել 11 750 000 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Թույլատրել անհրաժեշտ գնումները իրականացնել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես

հրապարակելու:

3. Գնումների իրականացման և վառելափայտի բաշխման ողջ գործընթացի վերահսկողությունը վերապահել Գյումրի համայնքի ավագանու սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովին:

4. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4212) <<Էներգետիկ ծառայություններ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ԳՅՈՒՄՐՈՒ «ԿՈՍՊՈՍՍ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Գյումրի քաղաքում սոցիալ-տնտեսական հետազոտությունների իրականացմանն ու ձեռներեցության զարգացմանն աջակցելու նպատակով Գյումրու «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 998.000 (ինը հարյուր իննսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
- Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ <<ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության <<Երկրապահ կամավորականների միություն>> Գյումրու տարածքային բաժանմունքին որպես օգնություն հատկացնել 210.000 (երկու հարյուր տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և 220 (երկու հարյուր քսան) լիտր դիզելային վառելանյութ՝ Լեռնային Ղարաբաղում 2015թվականի օգոստոսի 15-ից անցկացվող ամենամյա ուխտագնացությանը գյումրեցի թվով 50(հիսուն) ազատամարտիկներից և պատանի երկրապահներից բաղկացած խմբի ճանապարհածախսը հոգալու նպատակով:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից, իսկ դիզելային վառելանյութի ձեռքբերման գումարի հատկացումը՝ 2/5/1 գործառական դասակարգման (4264) <<Տրանսպորտային նյութեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. «ԱՌՏ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- 2015 թվականի սեպտեմբեր ամսին Ստեփանավանում «ԱՌՏ» երիտասարդական, բնապահպանական և խորհրդատվական հասարակական կազմակերպության Վորլդ Վիժն Գյումրիի «Տարածքային զարգացման ծրագրի» աջակցությամբ իրականացվելիք երիտասարդական վրանային 5-օրյա ճամբարի կազմակերպման և ծրագրի իրականացման նպատակով, որպես նվիրատվություն հատկացնել 500.000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
- Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՄԵՑԻՆ.

11. ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Գյումրիում երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների անցկացման նպատակով Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
- Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. «ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻ ԵՎ ԿԵՍ ԴԱՐ» ԳՐՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- կողմ – 14
- դեմ – 0
- ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. <<Հարյուր տարի և կես դար>> գրքի տպագրման նպատակով Հայաստանի թատերական գործիչների միությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՄԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից 2015 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների.
- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 413,58 (չորս հարյուր տասներեք ամբողջ հիսունութ հարյուրերորդական) հեկտար, որից վարելահող՝ 88,43(ութսունութ ամբողջ քառասներեք հարյուրերորդական) հեկտար, արոտ՝ 323,87 (երեք հարյուր քսաներեք ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) հեկտար,
- բնակավայրի հողեր 2712,15(երկու հազար յոթ հարյուր տասներկու ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) հեկտար, որից տնամերձ՝ 367,64 (երեք հարյուր վաթսունյոթ ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) հեկտար, հասարակական՝ 128,72 (հարյուր քսանութ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) հեկտար, խառը կառուցապատման՝ 15,66 (տասնհինգ ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) հեկտար, ընդհանուր օգտագործման՝ 377,03(երեք հարյուր յոթանասույոթ ամբողջ երեք հարյուրերորդական) հեկտար, այլ հողեր՝ 1053,47 (մեկ հազար հիսուներեք ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) հեկտար,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր 366,39 (երեք հարյուր վաթսունվեց ամբողջ երեսունինը հարյուրերորդական) հեկտար,

- Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր 423,02 (չորս հարյուր քսաներեք ամբողջ երկու հարյուրերորդական) հեկտար,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր 94,11 (ինսունչորս ամբողջ տասնմեկ հարյուրերորդական) հեկտար,
- հատուկ նշանակության հողեր 256,69 (երկու հարյուր հիսունվեց ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) հեկտար,
- անտառային հողեր 150,84 (մեկ հարյուր հիսուն ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) հեկտար,
- ջրային հողեր 12,72(տասներկու ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) հեկտար,
- քաղաքացիների սեփականության հողեր 407,56 (չորս հարյուր յոթ ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) հեկտար,
- իրավաբանական անձանց հողեր 68,81 (վաթսունութ ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) հեկտար,
- համայնքային սեփականության հողեր 3255,45 (երեք հազար երկու հարյուր հիսունհինգ ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) հեկտար,
- պետական սեփականության հողեր 687,52 (վեց հարյուր ութսունյոթ ամբողջ հիսուներկու հարյուրերորդական) հեկտար,
- վարչատարածք՝ 4429,50 (չորս հազար չորս հարյուր քսանինն ամբողջ հինգ տասնորդական) հեկտար:

Որոշումն ընդունվեց

ԼՄԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴՈՒԴԿՈՅԻ ԵՎ ԲՈՒՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՏՄԱՆ ՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՐԱՊԱՐԱԿՆ ԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Դուդուկյի և Բուլվարային փողոցների հատման վայրում գտնվող հրապարակն անվանել «Գյումրիի հրապարակ»:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 05082015-08-0038) Վազգեն Սարգսյան փողոց N 54 հասցեի մարզադպրոցից առանձնացված 1219.10 (մեկ հազար երկու հարյուր տասնինն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքը 30 (երեսուն) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Գյումրու ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍ ԼՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՄԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Գյումրու ֆուտբոլի համալիրի զբաղեցրած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամաս N 10/5 հասցեի 8.0 (ութ) հեկտար մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը նվիրաբերել Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 15-Ի N 86-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՄԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 15-ի « Հայաստանի Հանրապետության Ոստիկանությանը անհատույց (մշտական) օգտագործման հողամասեր տրամադրելու մասին» N 86-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

- «յուրաքանչյուրը» բառը փոխարինել «115.16 (մեկ հարյուր տասնհինգ ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով և» թվով և բառերով:

2 . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՍՍՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել հողամասերի օտարման աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերը տրամադրել մրցույթով կառուցապատման իրավունքով և սահմանել հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀՐԱՊԱՐԱԿ N 10/2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28042015-08-0015) Բագրատունյաց հրապարակի պուրակի մաս կազմող Բագրատունյաց հրապարակ N 10/2 հասցեի ընդհանուր օգտագործման գործառական նշանակությամբ 0.11821 (գրո ամբողջ տասնմեկ հազար ութ հարյուր քսանմեկ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը մրցույթով վարձակալության իրավունքով 20 (քսան) տարի ժամկետով օգտագործման տրամադրել՝ հողամասի գործառական նշանակությանը համապատասխան շահագործելու և բնակչությանը ծառայություններ մատուցելու նպատակով:
- Հողամասի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 650000 (վեց հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 15/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊՈԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՄԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոց N 15/1 հասցեում ինքնակամ կառուցված 3.91 (երեք ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը և նրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 36.20 (երեսունվեց ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 50 (հիսուն) տարի ժամկետով վարձակալության

տրամադրել տվյալ պարիսպը կառուցած քաղաքացի Գագիկ Մերուժանի Ադամյանին:

- Սույն որոշման 1-ին կետում նշված պարսպի և հողամասի վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 36000 (երեսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ :

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՓՈՂՈՑ N 29/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց N 29/11 հասցեում ինքնակամ կառուցված 15,47 (տասնհինգ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 10,08 (տասն ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 5 (հինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած քաղաքացիներ Լիդա Սաշիկի Ավագյանին և Բաբկեն Պավլեի Մկրտչյանին:
- Սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական շինության և հողամասի վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 35000 (երեսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՄԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՄՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շրակի մարզի Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Ղարսի խճուղի N 4/7 հասցեի շինությունները աճուրդային կարգով օտարելու և աճուրդի մեկնարկային գին հաստատելու մասին» N 56-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - որոշման 2-րդ կետի □3.280.000 (երեք միլիոն երկու հարյուր ութսուն հազար)՝ թիվը և բառերը փոխարինել □2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար)՝ թվով և բառերով:
- 2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՄԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի իրավաբանական ապահովման բաժնի պետ Ա. Գրիգորյանին:

Ա. Գրիգորյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմինն կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 190-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.**

25. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԺՊԻՏ», «ԳՈՀԱՐ», «ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՆԿԻԿ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից գեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի կրթության բաժնի պետ Հ. Սուլթանյանին:
Հ. Սուլթանյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Գյումրու «Ժպիտ», «Գոհար», «Գյումրու մանկիկ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում ընթացիկ վերանորոգումներ իրականացնելու, ինչպես նաև գույք ձեռք բերելու նպատակով տրամադրել 1 000000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
- Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի

բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՄԵՑԻՆ.

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ <<ԿՈՒՄՍՅՐԻ>> ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Ա. Մկրտչյանին:

Ա. Մկրտչյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Հատկացնել Գյումրու <<Կումայրի>> պատմամշակութային արգելոց-թանգարան համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 650000 (վեց հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Գյումրու Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարանի գիտական ցուցադրությունը թարմացնելու, մեծ բանաստեղծի ծննդյան 140-ամյա հոբելյանը հավուր պատշաճի կազմակերպելու նպատակով թվով 8 (ութ) ապակյա ցուցափեղկեր պատրաստելու համար՝ համաձայն հավելվածի:

- Հանձնարանել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/2/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՄԵՑԻՆ.

27. ԱՐԹՈՒՐ ՆԻԿՈԼԱՅԻ ԶԻԼԻՆԳԱՐՈՎԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Ա. Մկրտչյանին:

Ա. Մկրտչյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Արթուր Նիկոլայի Զիլինգարովին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչումը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

28. ՖԵԼԻՔՍ ՎՐՈՒՅՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Ա. Մկրտչյանին:

Ա. Մկրտչյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆելիքս Վրույրի Գրիգորյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչումը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

29. ՀԱՅԿ ՄԱՐԳՍԻ ՔՈԹԱՆՁՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա. ՄԿՐՏՁՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Ա. Մկրտչյանին:

Ա. Մկրտչյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայկ Սարգսի Քոթանջյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչումը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

30. 2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ. Ղազարյանին:

Մ. Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2015 թվականին Եվրոպայի և աշխարհի չեմպիոններ և մրցանակակիրներ դարձած մարզիկներին և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 1.020.000 (մեկ միլիոն քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ

նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՄԵՑԻՆ.

31. 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 6-ՐԴ ԱՍՍԱՌԱՅԻՆ ԽԱՂԵՐԻՆ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՔՆԵՐ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ԵՎ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ

ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ. Ղազարյանին:

Մ. Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

• 2015 թվականի օգոստոսի 2-13-ը համահայկական 6-րդ ամառային խաղերում առավել բարձր արդյունքներ ցուցաբերած մարզիկներին և նրանց մարզիչներին դրամական պարգևներ և հուշանվերներ շնորհելու նպատակով հատկացնել 1.810.000 (մեկ միլիոն ութ հարյուր տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեից 1.460.000 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը 8/1/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից, իսկ 350.000 (երեք հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ 8/1/1 գործառական դասակարգման (4861) <<Այլ ծախսեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՄԵՑԻՆ.

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետությանը հողամաս և անշարժ գույք նվիրաբերելու մասին» N 108-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

- «1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գարեգին Նժդեհի փողոց N 11/9 հասցեի 0.24 (զրո ամբողջ քսանչորս հարյուրերորդական) հեկտար մակերեսով հողամասը և 39.98 (երեսունինն ամբողջ ինսունուր հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21082015-08-0001) նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու թիվ 2 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից բացօթյա սպորտային հրապարակ և կաթսայատուն օգտագործելու նպատակով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՔՍՏԻԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ N 1/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒԹՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՊԱՐԻՄՊԸ ԵՎ ԴԲԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տեքստիլագործների փողոց N 1/2 հասցեում ինքնակամ կառուցված 60.56 (վաթսուն ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (46.29 (քառասունվեց ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը, 6.33 (վեց ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 95.37 (իննսունհինգ ամբողջ երեսուկյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 10 (տասը) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած քաղաքացի Սարգիս Մազբետի Զաքարյանին:

2 Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան, պարսպի և հողամասի վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 60000 (վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 156-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՄԱՆՅԱՆ

ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Աճուրդով օտարելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող առանձնացված հողամասերի աճուրդի մեկնարկային գներ և պայմաններ հաստատելու մասին» N 156-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

- 3-րդ տողի 6-րդ սյունակում 650000 թիվը փոխարինել 450000 թվով:

- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 26/6 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍՄԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Փոփոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, Վազգեն Սարգսյան փողոց N 26/6 հասցեի 3000(երեք հազար) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ այն բնակավայրերի հողերի ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությունից տեղափոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Գյումրի համայնքի <<Անի փողային նվազախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ կազմակերպության աշխատակիցներին խրախուսելու նպատակով:

2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ի կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրու համայնքի 2015 թվականի բյուջեի 8/2/3գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

37. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԱՅՂԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա. ՀԱԿՈՒԲՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ Ա. Հակոբյանին:

Ա. Հակոբյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Թույլատրել Գյումրի համայնքի կարիքների համար օգտագործելու նպատակով առուվաճառքի միջոցով «Հայաստանի Հանրապետության մամուլի տարածման գործակալություն» փակ բաժնետիրական ընկերությունից ձեռք բերել սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող Գյումրի քաղաքի Գործարանային փողոցի N 44 հասցեում գտնվող 392.68 (երեք հարյուր իննսուներկու ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով երկհարկանի շինությունը (սեփականության իրավունքի վկայական՝ N 1966894):
- Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի ձեռքբերման համար Գյումրի համայնքի բյուջեից հատկացնել 24.000.000 (քսանչորս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
- Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 1/1/1 գործառական դասակարգման (5111) ՈՇենք-շինությունների ձեռքբերումն օնտեսագիտական դասակարգման հոդվածից:
- Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացումն ու պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

